## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, Լեռնանիստ համայնք , /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2017թվականի N 45-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածով

**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 5- ի թիվ 11 հերթական նիստի ՕՐԱԿԱՐԳԸ՝

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի եվ վճարների միասնական դրույքաչափերը սահմանելու մասին :

2. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանելու մասին:

3. Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի , <<Լեռնանիստի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի և <<Լեռնանիստ բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին:

4. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի N 78-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

5. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին:

6. Լեռնանիստի համայնքապետարանի 2018 թվականի բյուջեի կատարման ընթացքում համայնքի ավագանու որոշմանը չհակասող վերաբաշխումներ կատարելու թույլտվություն տալու մասին:

7. Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2018 թվականի կամավոր լիազորությունների իրականացման կարգը սահմանելու մասին:

8. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2018 թվականի համար սահմանված հերթական նիստերի ժամանակացույցի հաստատման մասին:

9. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը վարձակալությամբ մրցութային կարգով տրամադրելու մասին:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, Լեռնանիստ համայնք , /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2017թվականի N 46 -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով

***Համայնքի ավագանին <u>ՈՐՈՇՈՒՄ Է՝</u>***

1. Սահմանել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների միասնական դրույքաչափը, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Հավելված
*«« Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու*
*2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 46-Ն որոշման*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության /տեղադրման/ /բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է՝

**<u>Հիմնական շենքերի և շինությունների համար.</u>**

1) մինչև 300 քմ. ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի,այդ թվում ՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար **4.500 դրամ**

2) **Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝**

**ա**. 200-ից մինչև 500քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **9.000 դրամ:**

**բ**. 500 -ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **15.000 դրամ:**

գ. 1000 –ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար ՝ **15.000 դրամ**:

դ. 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ 30.000 դրամ

**ոչ հիմնական շենքերի և շինությունների համար**

ե. մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **900 դրամ**

**զ**. 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **1500 դրամ**

**2.** Համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնեցման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների / բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանավծ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

1) չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտների ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառնական նշանակության փոփոխություն ՝ **900** դրամ

2) բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ

շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի <<ա>> ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

3) նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3. համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար տեղական տուրքը սահմանել՝ **1500** դրամ.

**4.** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50 000** դրամ.

**5.** Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձր լեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ 10 000 դրամ.

**6.** համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **50 000** դրամ.

***7. Համայնքի վարչական տարածքում*** '

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **3 000** դրամ,
բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **10001** դրամ,
գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **13001** դրամ,
դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **20001** դրամ,
ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **25001** դրամ,
զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում **45001** դրամ.

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ սահմանել **3 000** դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **10001** դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **13001** դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **20001** դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **25001** դրամ.

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում սահմանել **45001** դրամ

***8. Համանքի փարածքում՝***

1) Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար մեկ քառակուսի մետրի համար տեղական տուրք սահմանել **350** դրամ՝

**9.** Համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար օրացուցային տարվա համար սահմանվում է՝

1) առևտրի օբյեկտների համար՝ **25 000** դրամ,
2 ) հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **50 000** դրամ,
3 ) բաղնիքների (սաունաների) համար՝ **200 000** դրամ,
4 ) խաղատների համար՝ **500 000** դրամ,
5 ) շահումով խաղերի համար՝ **500 000** դրամ,
6 ) վիճակախաղերի համար՝ **150 000** դրամ.

**10.** Համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել՝

1) հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1 000** դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **5001** դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **10001** դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **15001** դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **20001** դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **30001** դրամ.

2 ) ոչ հիմնական շինությունների ներսում՝

ա. մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **300** դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **1001**դրամ,

գ. 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **2001** դրամ,

դ. 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **4001** դրամ,

ե. 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **8001** դրամ,

զ. 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **15001** դրամ.

**11.** Ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար սահմանել՝

1 ) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **2000** դրամ,

2 ) թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **3500** դրամ,

3 ) սոցիալական գովազդի համար՝ 0 դրամ,

4) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,

5 ) դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

6 ) եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանել տուրքի 10 %-ի չափով.

12. Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել 30 000 դրամ.

13. Համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանել 3000 դրամ.

14. Համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար սահմանել 150 000 դրամ.

15. Համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

1) 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **2.500.000** Հայաստանի Հանրապետության դրամ.

2) 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **5.000.000** Հայաստանի Հանրապետության դրամ.

3) 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **7.000.000** Հայաստանի Հանրապետության դրամ.

4) 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **10.000.000** Հայաստանի Հանրապետության դրամ

**16.** համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **5000 դրամ**:

**17.** ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10 000 դրամ

**18.** ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 5000 դրամ

**19.** համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել **0 դրամ**:

**20.** համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ **5000 դրամ**

**21.** համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 0 դրամ:

**22.** Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աղբահանությունը կազմակերպելու համար աղբահանության վճար սահմանել՝

1) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճար սահմանել ըստ ծավալի ՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **500** դրամ:

2 ) կենտրոնացված ջեռուցման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել 0 դրամ:

3) Կենցաղային աղբի համար աղբահանության վճար սահմանել ըստ հաշվառված անձանց քանակի (համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող) և /կամ/ փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական **50** դրամ:

4) ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝ ըստ ծավալի ՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ **500** դրամ:

**5)** ջրմուղ-կոյուղու ծառայություններ իրականացնելու համար՝ մասնավորապես ջրամատակարարման և ջրահեռացման վճարներ՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել 0 դրամ:

**6)** ոռոգման ջրի մատակարարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել 0 դրամ:

**7)** համայնքի կողմից կառավարվող բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերի կատարման համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել 0 դրամ:

**8)** համայնքային ենթակայության մանկապարտեզի ծառայությունից օգտվողների համար համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար՝ ծնողական վճար սահմանել մանկապարտեզ հաճախող յուրաքանչյուր երեխայի համար ամսական **4000** դրամ:

**9)** համայնքային ենթակայության արտադպրոցական դաստիարակության հաստատությունների (երաժշտական, նկարչական և արվեստի դպրոցներ և այլն) ծառայություններից օգտվողների համար՝ համայնքի կողմից կամ համայնքի պատվերով մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել 0 դրամ:

**10)** համայնքի վարչական տարածքում, սակայն համայնքի բնակավայրերից դուրս գտնվող՝ ավագանու որոշմամբ հանրային հանգստի վայր սահմանված և համայնքի կողմից կամ համայնքի պատվերով որպես հանրային հանգստի վայր կահավորված տարածքում ընտանեկան կամ գործնական միջոցառումներ անցկացնելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 0 դրամ .

11) համայնքային սեփականություն հանդիսացող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների և համայնքային ենթակայության թանգարանների մուտքի համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման գումար սահմանել 0 դրամ:

**12)** համայնքային սեփականություն հանդիսացող ընդհանուր օգտագործման փողոցներում և հրապարակներում (բացառությամբ բակային տարածքների, ուսումնական, կրթական, մշակութային և առողջապահական հաստատությունների, պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների վարչական շենքերի հարակից տարածքների) ավտոտրանսպորտային միջոցն ավտոկայանատեղում կայանելու համար տեղական վճար սահմանել 0 դրամ:

**13)** համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ սահմանել **500** դրամ փոխհատուցման վճար:

**ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, Լեռնանիստ համայնք , /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2017թվականի N 47-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11 -րդ կետով

**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ղեկավարի վարձատրության չափը սահմանել 287.000 / երկու հարյուր ութսունյոթ հազար / ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, Լեռնանիստ համայնք , /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2017թվականի N 48-Ա

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ, <<ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ>> ՀՈԱԿ-Ի ԵՎ <<ԼԵՌՆԱՆԻՍՏ ԲԺՇԿԱԿԱՆ ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ>> ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 –րդ հոդվածի 1-ին մասի 28 –րդ կետով

**Համայնքի ավագնին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1.Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի, <<Լեռնանիստի մանկապարտեզ>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի և <<Լեռնանիստ բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը, համաձայն N 1.2.3 հավելվածների:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

Հավելված N 1
Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 48-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Կոտայքի մարզի Լեռնանիստի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2017 թվականի համար

Աշխատակիցների թվաքանակը` 17,5

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | - | 1 | 287 000 | | | 287 000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Հայեցողական | _ | 1 | 134200 | | | 134200 |
| 3 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | _ | 1 | 134200 | | | 134200 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայության | 1.2-1 | 1 | 157 000 | | | 157 000 |
| 5 | | առաջատար մասնագետ-հաշվապահ | Համայնքային ծառայության | 3, 1-1 | 1 | 138 100 | | | 138 100 |
| 6 | | առաջատար մասնագետ-գանձապահ | Համայնքային ծառայության | 3, 1-2 | 1 | 138 100 | | | 138 100 |
| 7 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3,2-1 | 1 | 84 600 | | 846 | 85 446 |

| | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | | 1-ին կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3,2-2 | 1 | 84 600 | | | 84 600 |
| 9 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3,3-1 | 1 | 84 600 | | | 84 600 |
| 10 | | 2-րդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայության | 3,3-2 | 1 | 84 600 | | | 84 600 |
| 11 | | գործավար | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 77 905 | | | 77 905 |
| 12 | | պահակ | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 77 904 | | | 77 904 |
| 13 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 77 904 | | | 77 904 |
| 14 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | _ | 0,5 | 77 904 | | | 39 000 |
| 15 | | Հավաքարար | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 72 752 | | | 72 752 |
| 16 | | Վարորդ | Տեխնիկական սպասարկման | | 1 | 77 904 | | | 77 904 |
| 17 | | աղբահանության բանվոր | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 77 904 | | | 77 904 |
| 18 | | Գերեզմանատան բանվոր | Տեխնիկական սպասարկման | _ | 1 | 72 752 | | | 72 752 |
| | Ընդամենը | | | | 17,5 | 1 939 929 | | 846 | 1 901 871 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 3
Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 48-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Կոտայքի մարզի <<Լեռնանիստի բժշկական ամբուլատորիա>> ՀՈԱԿ-ի աշխատակիցների թանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2017 թվականի համար

Աշխատակիցների թվաքանակը՝ 6

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | դրույքը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | <<Լեռնանիստի բժշկական ամբուլատորիա>> /ՀՈԱԿ/ | Տնօրեն | – | - | 1 | 0.5 | 59 550 | | | 59 550 |
| 2 | | Հաշվապահ | | - | 1 | 1.0 | 95 280 | | | 95 280 |
| 3 | | Ընտանեկան բժիշկ | – | – | 1 | 1.0 | 285 312 | | | 285 312 |
| 4 | | Ընտանեկան բուժքույր | | | 1 | 1.0 | 96 909 | | | 96 909 |
| 5 | | Ընտանեկան բուժքույր | – | – | 1 | 1.0 | 96 909 | | | 96 909 |
| 6 | | Սանիտար | – | – | 1 | 0.75 | 54 564 | | | 54 564 |
| 7 | | Օպերատոր | – | – | 1 | 0.75 | 58 428 | | | 58 428 |
| | | Ընդամենը | | | 7 | 6 | 746 952 | | | 746 952 |

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված N 2
Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 48-Ա որոշման

# ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ

Կոտայքի մարզի Լեռնանիստի մանկապարտեզի /ՀՈԱԿ/ աշխատակիցների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը 2017 թվականի համար

Աշխատակիցների թվաքանակը՝ 21

| Հ/հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | հաստիքային միավորը | դրույքը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Լեռնանիստի մանկապարտեզ /ՀՈԱԿ/ | տնօրեն | _ | - | 1 | 1 | 98 000 | | | 98 000 |
| 2 | | Գլխ. Հաշվապահ | — | - | 1 | 0,5 | 77 904 | | | 38 952 |
| 3 | | գանձապահ | _ | - | 1 | 0,5 | 77 904 | | | 38 952 |
| 4 | | մեթոդիստ | - | - | 1 | 1 | 72 752 | | | 72 752 |
| 5 | | դաստիարակ | — | — | 3 | 1 | 79 400 | | | 238 200 |
| 6 | | դաստիարակ | _ | - | 2 | 0,5 | 79 400 | | | 79 400 |
| 7 | | դաստիարակի օգնական | _ | - | 2 | 1 | 72 752 | | | 145 504 |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 8 | | դաստիարակի օգնական | _ | - | 2 | 1 | 77 904 | | | 155 808 |
| 9 | | դաստիարակ երաժիշտ | _ | - | 1 | 1 | 79 467 | | | 79 467 |
| 10 | | բուժքույր | _ | - | 1 | 0,75 | 77 904 | | | 58 428 |
| 11 | | խոհարար | _ | - | 1 | 1 | 77 904 | | | 77 904 |
| 12 | | խոհարարի օգնական | _ | - | 1 | 1 | 72 752 | | | 72 752 |
| 13 | | Տնտեսվար | _ | - | 1 | 0, 70 | 77 904 | | | 54 533 |
| 14 | | դռնապան | _ | - | 1 | 1 | 72 752 | | | 72 752 |
| 15 | | պահակ | _ | - | 1 | 1 | 72 752 | | | 72 752 |
| 16 | | օժանդակ բանվոր | _ | - | 1 | 0,5 | 72 752 | | | 36 376 |
| | | Ընդամենը | | | 21 | 13 ,45 | 1 240 203 | | | 1 392 532 |

ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ————— Ա.ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, Լեռնանիստ համայնք , /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2017 թվականի N 49-Ն

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 12-Ի N 78-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի պահանջներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2017 թվականի նոյեմբերի 29-ի առաջարկությունը

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 12-ի <<Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2017 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N 78 -ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 01.1.1.51/ օրենդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ ծրագրի 4111 /աշխատավարձ/ հոդվածի <<24500.0>> թիվը փոխարինել <<23980.0>>թվով
2) 01.1.1.51/օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում/ ծրագրի 4112 /պարգևատրում/ հոդվածի <<1327.0>> թիվը փոխարինել <<1367.0>> թվով:
3) 01.1.1.51 / օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ ծրագրի 4212 /էներգետիկ ծառայություններ/ հոդվածի <<2200,0>> թիվը փոխարինել <<1590.3>> թվով:
4) 01.1.1.51 /օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ ծրագրի 4232 / համակարգչային ծառայություններ/ հոդվածի <<50,0>> թիվը փոխարինել <<0>> թվով:
5) 01.1.1.51 /օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ ծրագրի 4251 /շենք և շինությունների ընթացիկ նորոգում/ հոդվածի <<270,0>> թիվը փոխարինել <<427.0>>թվով:
6) 01.1.1.51 /օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ ծրագրի 4252 /մեքենաների և սարքավորումների պահպանում / հոդվածի <<150,0>> թիվը փոխարինել <<170.0>>թվով:
7) 01.1.1.51 /օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ ծրագրի 4261 /գրասենյակային ապրանքներ/ հոդվածի <<400,0>> թիվը փոխարինել <<465.0>>թվով:
8) 01.1.1.51 /օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ ծրագրի 4269 /հատուկ նպատակային այլ նյութեր / հոդվածի <<380,0>> թիվը փոխարինել <<520.0>>թվով:
9) 01.1.1.51 /օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում/ ծրագրի 4235 /կառավարչական ծախսեր/ հոդվածի <<400,0>> թիվը փոխարինել <<420.0>>թվով:

10) 01.3.3.55 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ ծրագրի 4232 /համակարգչային ծառայություններ/ հոդվածի <<215.2>> թիվը փոխարինել <<169.4>> թվով:
11) 01.6.1.51 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ ծրագրի 4823 /պարտադիր վճարներ/ հոդվածի <<14,0>> թիվը փոխարինել <<9,0>> թվով:
12) 02.2.1.51 / քաղաքացիական պաշտպանություն/ ծրագրի 4239 / ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածի <<50,0>> թիվը փոխարինել <<0>> թվով:
13) 02.5.1.51 /պաշտպանություն/ ծրագրի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածի <<50,0>> թիվը փոխարինել <<0>> թվով:
14) 03.2.1.55 /փրկարարական ծառայություններ/ ծրագրի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություններ/ հոդվածի <<50.0>> թիվը փոխարինել <<0>> թվովւ
15) 04.2.1.03 /գյուղատնտեսություն/ ծրագրի 4216 /գույքի վարձակալում / հոդվածի <<135,0>> թիվը փոխարինել <<133.5>> թվով:
16) 04.2.1.03 /գյուղատնտեսություն/ ծրագրի 4511 /սուբսիդիա / հոդվածի <<550.0>> թիվը փոխարինել <<300.0>>թվով:
17) 08.2.4.51 /այլ մշակութային կազմակերպություններ/ ծրագրի 4239 /ընդհանուր բնույթի այլ ծառայություն / հոդվածի <<1395,0>> թիվը փոխարինել <<1625,0>> թվով:
18) 09.5.1.51 /արտադպրոցական դաստիարակություն / ծրագրի 4239 / ընդհանուր բնույթի այլ ծառայություն/ հոդվածի <<1320.0>> թիվը փոխարինել <<1380.0>> թվով:
19) 11.1.2.51 / պահուստային ֆոնդ/ ծրագրի 4891 /պահուստային ֆոնդ/ հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<913,0>> թվով:
20) 04.5.1.51 /ճանապարհային տնտեսություն/ ծրագրի 4252 / մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում / հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<50.0>> թվով:
21) 01.3.3.51 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ)ծրագրի 4234 /տեղեկատվական ծառայություններ/ հոդվածի <<63.0>> թիվը փոխարինել <<0>> թվով:

Ֆոնդային բյուջե

Վարչական բյուջեի միջոցներից <<913,0>> հազար դրամ հատկացնել ֆոնդային բյուջե ստորը նշված գործարքները կատարելու համար:
49.1 եկամուտ խմբի վարչական բյուջեի պահուստային ֆոնդից հատկացում՝ ֆոնդային բյուջե նախատեսել <<913,0>> հազար դրամ:

1. Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 368 հազար դրամ հատկացում կատարել ֆոնդային բյուջե՝ 01.1.1.51 /օրենսդիր և գործադիր մարմիններ պետական կառավարում/ ծրագրի 5122 /վարչական սարքավորումներ/ հոդվածի <<622,0>> թիվը փոխարինել <<990,0>> թվով:

2) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից 165,0 հազար դրամ հատկացում կատարել ֆոնդային բյուջե 04.5.1.51 / ճանապարհային տնտեսություն/ ծրագրի 5122 /վարչական սարքավորումներ/ հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<165,0>> թվով:

3) վարչական բյուջեի ահուստային ֆոնդից 380,0 հազար դրամ հատկացում կատարել ֆոնդային բյուջե՝ 08.2.4.51 /այլ մշակութային կազմակերպություններ / ծրագրի 5129 /այլ մեքենաներ և սարքավորումներ/ հոդվածի <<0>> թիվը փոխարինել <<380,0>> թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2017 թվականի N 50-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով

***Համայնքի ավագանին*** ***Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝***

1. Հաստատել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի 2018 թվականի բյուջեն, համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Լեռնանիստ, /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2017 թվականի N 51-Ն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆԸ ՉՀԱԿԱՍՈՂ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 83-րդ հոդվածի 2-րդ մասի, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետի

Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Թույլատրել Լեռնանիստ համայնքի ղեկավարին 2018 թվականի բյուջեի կատարման ընթացքում կատարել ավագանու որոշմանը չհակասող վերաբաշխումներ, բյուջեի 15 %-ի չափով:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդող 10-րդ օրվանից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԵԽԱԿ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, Լեռնանիստ համայնք , /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2017թվականի N 52-Ա

### ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2017 թվականի նոյեմբերի 29-ի առաջարկությունը

Համայնքի ավագանին **ՈՐՈՇՈՒՄ Է՝**

Սահմանել համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների իրականացման կարգը 2018 թվականի համար՝

1. Սոցիալապես անապահով ընտանիքներին դրամական օգնության տրամադրում՝ մինչև 100. 000 / մեկ հարյուր հազար/ ՀՀ դրամի չափով:
2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԽԻԿՅԱՆ

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, Լեռնանիստ համայնք , /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

05 դեկտեմբերի 2017 թվականի N 53-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի պահանջներով .

**Համայնքի ավագանին ՈՐՈՇՈՒՄ Է՝**

1. Սահմանել Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու 2018 թվականի հերթական նիստերի ժամանակացույցը, համաձայն հավելվածի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԽԻԱԿ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Հավելված 1
ՀՀ Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի ավագանու
2017 թվականի դեկտեմբերի 5-ի N 53-Ա որոշման

# ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

| 2018Թ. | |
|---|---|
| 10 ՀՈՒՆՎԱՐԻ | 2018 թվական. |
| 28 ՓԵՏՐՎԱՐԻ | 2018 թվական. |
| 06 ԱՊՐԻԼԻ | 2018 թվական. |
| 04 ՀՈՒՆԻՍԻ | 2018 թվական. |
| 09 ՀՈՒԼԻՍԻ | 2018 թվական. |
| 03 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ | 2018 թվական. |
| 09 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ | 2018 թվական |
| 05 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ | 2018 թվական |

Լեռնանիստ համայնքի ղեկավար՝ Ա.Հայրապետյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, Լեռնանիստ համայնք , /094-55-33-04, 093-47-01-51, lernanist1828@mail.ru,

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 դեկտեմբերի 2017թվականի N 54-Ա

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԼԵՌՆԱՆԻՍՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Լեռնանիստ համայնքի ղեկավարի 2017 թվականի նոյեմբերի 29-ի առաջարկությունը

Համայնքի ավագանին Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Կոտայքի մարզի Լեռնանիստ համայնքի սեփականություն հանդիսացող հողամասը՝ գյուղատնտեսական նշանակության 3.51153 հա մակերեսով (սեփականության վկայական N 21112017-07-0055) վարելահող վարձակալությամբ տրամադրել մրցութային կարգով 15 տարի ժամկետով և սահմանել վարձակալական վճարի մեկնարկային գինը՝ 3.51153 հա-ի համար 26 000 / քսանվեց հազար/ ՀՀ դրամ:

2. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Կողմ -8

Դեմ -0

Ձեռնպահ -0

1. ԱԼՈՅԱՆ ՍԱՐԳԻՍ
2. ԱՎԱԳՅԱՆ ԳԵՆԱԴԻ
3. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ ՍԱՄՎԵԼ
4. ԲԱՐԵՂԱՄՅԱՆ ԳՐԻԳՈՐԻ
5. ԳՐԻԳՈՐՅԱՆ ՌԱԶՄԻԿ
6. ՄԱՆՈՒԿՅԱՆ ՌՈՄԱՆ
7. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԻՍԱՀԱԿ
8. ՆԱԶԱՐՅԱՆ ՄԽԻԹԱՐ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐՏՅՈՄ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ